



ՃՃՄ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՇԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ
ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐԴՄԻՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

2017թ. թիվ 32



ՀԱՐԳԵԼԻ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

Ամփոփելով անցնող աշխատանքային տարին՝ կամենում ենք, որ գալիք՝ 2018 թվականը բոլորիս համար արժանապատիվ աշխատանքի, ձեռքբերումների ու վերելքի տարի լինի:

Մաղթում ենք առողջություն, երջանկություն, սեր և ուժեղ կամք՝ չպակասող խնդիրները պատվով լուծելու համար: Թող անավարտ մնացած գործերը 2018-ին հաջող ավարտ ունենան: Թող 2018-ը լինի հաջողության ու բարեկեցության, միասնության ու համերաշխության, նախաձեռնությունների ու փոփոխությունների, հանդուրժողականության ու առաջընթացի տարի:

Խաղաղ երկինք բոլորիդ:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ Ծնունդ:

ՄԱՐԴԸ՝ ԵԿԱՍՏԻՑ ԱՌԱՎԵԼ

Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի ունեցավ Հանրային ծառայությունների ինտերնացիոնալի՝ Public Service International-ի (PSI) 30-րդ համագումարը: PSI առաջին համագումարից ուղիղ 110 տարի անց երկիր մոլորակի բոլոր աշխարհամասերից պետական ծառայողներին ներկայացնող ավելի քան հազար պատվիրակներ հավաքվել էին Ժնևում՝ մերժելու ամենուր տեղի ունեցող սեփականաշնորհումները, բացահայտելու կորպորացիոն գաղափարախոսության սուտը, շուկայական հարաբերությունների քառսը և պայքարելու այն խորը համոզմունքի համար, որ ՄԱՐԴԸ ԵԿԱՍՏԻՑ ԱՌԱՎԵԼ է:

Բացման ուղերձով ելույթ ունեցավ PSI գլխավոր քարտուղար Ռոզա Պավանելլին:

Ուղերձներով հանդես եկան արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի նախագահը, Ժնևի քաղաքապետը և այլք: Համագումարին զուգահեռ ընթանում

Էին կանանց կոմիտեի, երիտասարդ աշխատողների, ԼԳԲՏ համայնքի, ոլորտային ու տարածաշրջանային գործադիր կոմիտեների, ազդարարների (whistleblowers) պաշտպանության և այլ ֆորումներ, նիստեր ու սեմինարներ:

Համագումարում առաջնային էին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝

«Մարդիկ՝ եկամտից առավել»

ՄԱԿ-ի սոցիալական զարգացման հետազոտական կենտրոնի աշխատակից Մագդալենա Սեպուլվեդան նշեց, որ բռնապետությունների հետքերը մինչ այժմ սփռված են հասարակությունների վրա: Աղքատության, սովի ու անհավասարության մակարդակներն ամեն տեղ աճում են, ակտիվիստները ենթարկվում են ճնշումների, բնիկ ժողովուրդները՝ խտրականությունների, իսկ խոշոր կորպորացիաները շարունակում են շահագործել ու առգրավել հանրային հողերն ու ռեսուրսները: Նրա խոսքով, այս ամենի դեմ պայքարելու համար մենք պետք է վերջապես դուրս գանք մեր կոմֆորտի գոտուց, համագործակցենք միջազգային գործընկերների հետ և համախմբեմք ուժերը պրոգրեսիվ ուժերի հետ՝ դիմադրելու քայքայողական քաղաքականությանը:

«Մեր առողջությունը չի վաճառվում»

Առողջապահական համակարգի սեփականաշնորհումը և շուկայականացումը բերել է նրան, որ տարեկան ավելի քան 150 միլիոն մարդ ծանր ֆինանսական վիճակի մեջ է հայտնվում առողջապահական ծախսերը հոգալու պատճառով, իսկ 2 միլիոն երեխա մահանում է անմատչելի առողջապահության հետևանքով:

Ավստրալիայի արհմիության ներկայացուցիչները պատմեցին, որ սեփականաշնորհման դեմ իրենց համառ ու երկարատև պայքարի շնորհիվ հասել են նրան, որ 6 հիվանդանոցներից 5-ը թողել են պետության ենթակայության տակ:

Նիգերիայի արհմիութենականները պատմեցին, որ Էբոլայի ճգնաժամի հաղթահարման հիմնական բեռը նույնպես ընկել է արհմիութենականների վրա, չնայած որ շատերը հետագայում պատժվել են իշխանության կողմից՝ քայքայված բուժհամակարգը բացահայտելու համար:

«Հանրային ծառայությունը արդար տնտեսության մեջ»

Այս քննարկման ընթացքում ընդգծվեց, որ հանրային ծառայությունները ավելի մեծ դեր ունեն, քան մենք պատկերացնում ենք: Նրանք նշանակություն ունեն ինչպես տեղական հանրության, այնպես էլ կայուն հասարակության

համար: Հարավաֆրիկյան Հանրապետության Քաղաքային համալսարանի տնտեսագետ Էնն Պետտիֆորը նշեց, որ չպետք է թողնել, որ խոշոր ընկերությունները դուրս հանեն իրենց փողերը դեպի օֆշորներ: Այդ փողերը պետք է հետ վերադարձվեն: Նրանք իրենց վեր են դասում ժողովրդավարական սկզբունքներից, իսկ երբ գալիս է հարկեր վճարելու և հաշվետու լինելու պահը, հօդս են ցնդում: Եվ այս ամենի հետ պայքարելու համար մեծ դեր պետք է ունենան հանրային սեկտորը և հանրային ծառայողը:

Լայն քննարկման արժանացան այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են պետական աշխատողի դերը զարգացման և կոռուպցիայի դեմ պայքարի հարցում, խոշոր կորպորացիաների կողմից հարկերից խուսափումը և եկամտի՝ դեպի օֆշոր տեղափոխումը, հանրային ծառայությունների սեփականաշնորհումը, տեխնոլոգիաների զարգացման պատճառով աշխատատեղերի կրճատումը, «օպտիմալացումը» և պետբյուջեի գումարների «կոշտ խնայողությունը», վերջին շրջանում զարգացող աջակողմյան, նացիոնալիստական և ֆաշիստական միտումները, նեոլիբերալ քաղաքականությունը, սոցիալական արդարությունը, հավասարությունը, բժշկության, խմելու ջրի և այլ ֆունդամենտալ հանրային ծառայությունների ունիվերսալ հասանելիությունը, միգրանտային և փախստականների ճգնաժամը, աշխատավայրում խտրականությունն ու բռնությունը և այլն:

Այլ պանելային քննարկումների ընթացքում խոսվեց նաև կոշտ խնայողության, նեոլիբերալ քաղաքականությունների և օրհասական այլ խնդիրների մասին: Մասնավորապես, երբ խոսքը գնում է բարեկեցության, սոցիալական ապահովության, ֆինանսական կայունության, բժշկության և այլ թեմաների մասին, կառավարություններն իրենց ցուցաբերում են չխառնվողի և լիբերալի դերում՝ հայտարարելով, որ մարդիկ իրենք բիզնեսի և մասնավորի օգնությամբ ազատ են տնօրինելու իրենց կյանքը: Սակայն այլ դաշտերում, ինչպիսիք են ժողովրդավարությունը, գենդերային խնդիրները, կրոնը և այլն, նույն կառավարությունները հանկարծակի դառնում են մեր փոխարեն որոշումներ կայացնող:

Համագումարում վերընտրվեցին PSI գլխավոր քարտուղարն ու նախագահը, հաստատվեցին կանոնադրական փոփոխություններ, ընդունվեցին բազմաթիվ բանաձևեր և առաջիկա հինգ տարիների գործողությունների ծրագիրը, տեղի ունեցան մի շարք պանելային քննարկումներ:

Համագումարի ընթացքում հնչեցին նաև մի շարք ուղերձներ՝ կապված ԱՄՆ-ի և Հյուսիսային Կորեայի միջև միջուկային լարվածության, գլոբալ առևտրային համաձայնագրերի և Թուրքիայում ստեղծված իրավիճակի հետ:

Համագումարն ուղեկցվեց նաև համերգային կատարումներով:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԱՄԿ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

2017 թվականի դեկտեմբերի 11-13-ը եռօրյա այցով Հայաստանում էին Աշխատանքի միջազգային կազմակերպության կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչները՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ԱՄԿ գրասենյակի առաջարկությունները քննարկելու նպատակով:

Այցի շրջանակներում մասնագիտական քննարկումներ են եղել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում: Այնուհետև կազմակերպվել է առավել լայն քննարկում, որին մասնակցել են ԱՄԿ փորձագետները, շահագրգիռ պետական մարմինների, ինչպես նաև Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչներ:

Թեև նախագծի հեղինակները առաջարկվող փոփոխությունները պայմանավորում են աշխատանքային հարաբերությունները միջազգային պայմանագրերին և ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, սակայն միևնույն ժամանակ նախագծում տեղ են գտել աշխատողների աշխատանքային պայմանները վատթարացնող դրույթներ: Ընդ որում, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն և ՀՀ առողջապահության նախարարությունը համակարծիք են արհմիությունների առաջարկներին նախագծի այնպիսի դրույթի դեմ, ինչպիսին է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքները կատարելու, ինչպես նաև գիշերային և արտաժամյա աշխատանքների համար աշխատողին տրվող հավելավճարների չափը գործատուի և աշխատողի պայմանավորվածությանը թողնելը:

ԱՄԿ փորձագետներն իրենց հերթին ներկայացրել են ԱՄԿ գրասենյակի մի շարք առաջարկներ, որոնք հիմնականում վերաբերում են նախագծում խտրականություն առաջացնող դրույթները վերանայելուն, մասնավորապես՝ գերփոքր ձեռնարկությունների դեպքում աշխատանքային պայմանագրում ընդգրկված պայմանները չպետք է լինեն պակաս բարենպաստ, քան սահմանված են գործող աշխատանքային օրենսդրությամբ:

ԱՄԿ փորձագետները նշում են, որ օրենսգրքի փոփոխությունները չպետք է նպաստեն աշխատողների աշխատանքի պայմանների նվազեցմանը, մասնավորապես՝ աշխատողների աշխատանքային էական պայմանների՝ գործատուի կողմից միակողմանի փոփոխումը, հավելավճարների սահմանափակումը, երկար աշխատաժամանակի և արտաժամյա աշխատանքի տևողության ընդլայնումը և այլն:

Առաջարկությունների մի մասն ընդունվել է նախագծի հեղինակների կողմից, և լրամշակվելուց հետո նախագիծը կրկին կներկայացվի եռակողմ քննարկման:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆՆԵՐԻ ԾԱՂԿԱՁՈՐՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

2017 թվականի նոյեմբերի 18-19-ը Ծաղկաձորի «Ռիպա» առողջարանում տեղի ունեցավ Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների 26 երիտասարդ անդամների հանդիպումը: Հանդիպման ընթացքում երիտասարդ արհմիութենականները քննարկեցին աշխատանքային օրենսգրքում կառավարության կողմից առաջարկվող փոփոխությունները, արհմիության առաջխաղացման հնարավորությունները, սոցիալական գործընկերության զարգացման ուղիները, կարծիքներ փոխանակեցին համայնքների միավորման, բյուջետային աշխատողների կրճատման վերաբերյալ: Խմբային աշխատանքներում արհմիութենական գովազդի տարբեր սցենարներ առաջարկվեցին, և Իջևանի ներկայացուցիչ Լիլիթ Օհանյանը նույնիսկ արհմիութենական երգի բառեր գրեց:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանը և գլխավոր հաշվապահ Ռուբեն Օհանջանյանը նոյեմբերի 30-ից երկօրյա աշխատանքային այցով գտնվում էին Սյունիքի մարզում:

Առաջին օրը Ա.Ասատրյանը և Ռ.Օհանջանյանը եղան Գորիս համայնքում, որտեղ հանդիպում ունեցան համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի հետ: Հանդիպման ընթացքում համայնքի ղեկավարը ներկայացրեց համայնքի զարգացման խնդիրներն ու հեռանկարները: Քննարկվեցին նաև աշխատակազմում արհեստակցական կազմակերպություն ստեղծելու հնարավորությունները: Նույն օրը Ա.Ասատրյանը և Ռ.Օհանջանյանը հանդիպում ունեցան նաև Տաթև համայնքի ղեկավար

Մուրադ Սիմոնյանի հետ: Քննարկվեցին աշխատանքային հարաբերությունների հետ կապված խնդիրներ և ճյուղային արհմիության դերը աշխատողների շահերը ներկայացնելու գործում:

Դեկտեմբերի 1-ին արհմիության ներկայացուցիչները ժամանեցին Կապան քաղաք, որտեղ ճյուղային արհմիության խորհրդի անդամներ Անահիտ Վանյանի՝ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի արհեստակցական կազմակերպության նախագահի և Ամալյա Բաբաջանյանի՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Սյունիքի մարզային գործակալության աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահի հետ քննարկեցին աշխատողների և արհմիությունների իրավունքների հետ կապված հարցեր: Հանդիպումներ եղան նաև արհմիության անդամների և ակտիվի հետ:

ԱՎԾ Սյունիքի մարզային գործակալության պետ Վլադիմիր Գրիգորյանի աշխատասենյակում արհմիության անդամների ներկայությամբ ճյուղային արհմիության նախագահ Ա.Ասատրյանը Ա.Բաբաջանյանին հանձնեց ճյուղային արհմիության պատվոգիրը:

Արհմիության խնդիրներն ու անելիքները ներկայացվեցին նաև Կապանի քաղաքապետարանի արհեստակցական կազմակերպության նախագահ Արմեն Գևորգյանի հետ հանդիպման ընթացքում:

ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

Ճյուղային հանրապետական արհմիության սպորտային միջոցառումներից հերթականը՝ սեղանի թենիսի երկրորդ թիմային առաջնությունը, անցկացվեց նոյեմբերի 11-ին մայրաքաղաքի «Սպարտակ» սպորտային ակումբում:

Միջոցառմանը մասնակցում էին Երևան քաղաքի անդամ կազմակերպությունների ինը թիմեր՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից, ՀՀ կառավարության աշխատակազմից, Հայաստանի պատմության թանգարանից, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունից, Խարբերդի մասնագիտացված մանկատնից, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունից, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեից, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից:

Եզրափակիչ փուլ դուրս եկան ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի թիմերը: Հաղթողները որոշվեցին թեժ պայքարում: Եզրափակիչ խաղն ավարտվեց ոչ

որի, որից հետո անցկացվեց լրացուցիչ մրցախաղ երկու հաղթող թիմերի ուժեղագույն խաղացողների՝ Մանուկ Խարատյանի և Ալլա Շախկույանի միջև: Այդպիսով հաղթող ճանաչվեց և ճյուղային արհմիության գավաթին արժանացավ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիմը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության թիմերն արժանացան արծաթե և բրոնզե մեդալների:

Առաջնությանը մասնակցած բոլոր թիմերը պարգևատրվեցին մասնակցության դիպլոմներով:

Մրցանակները հաղթողներին հանձնեց ՀՀ սեղանի թենիսի ֆեդերացիայի նախագահ, Եվրոպայի առաջին չեմպիոն, սպորտի վաստակավոր գործիչ Ֆելիքս Սարգսյանը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐՔՈՒՅԿ

ՃՀՄ նախորդ տեղեկագրերից մեկում տեղեկացրել ենք, որ ՀՀ կառավարության որոշմամբ շրջանառությունից դուրս եկող աշխատանքային գրքույկների թվայնացումն իրականացվելու է աշխատողների աշխատանքային գրքույկները ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն ներկայացնելու միջոցով: Ծառայության պետի հրամանով սահմանվել են աշխատանքային գրքույկները ծառայության տարածքային բաժիններ ներկայացնելու և ծառայության պատասխանատու աշխատողների ցանկերը: Ըստ այդմ՝ 1-3 աշխատողներ ունեցող գործատուն (այդպիսիք են ՃՀՄ անդամ կազմակերպությունների՝ գործատու հանդիսացող նախագահները) աշխատողների աշխատանքային գրքույկները պետք է համապատասխան տարածքային մարմին ներկայացնի 2018 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Նշված ցանկերը հասանելի են ՍԱՊԾ պաշտոնական կայքում՝ www.ssss.am:

Ճյուղային հանրապետական միությունը *հիշեցնում է* անդամ կազմակերպությունների նախագահներին՝ կանոնադրությամբ սահմանված կարգով հաշվետու և հաշվետու-ընտրական ժողովներն անհրաժեշտ է անցկացնել սահմանված ժամկետում՝ կազմակերպության ղեկավար մարմինների օրինականությունը պահպանելու համար: Արձանագրության մեկ օրինակը անհրաժեշտ է ներկայացնել ճյուղային արհմիություն:

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ՝ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

Անցնող արհմիութենական տարին հոբելյանական էր ճյուղային արհմիության անդամ կազմակերպությունների ղեկավարներից մի քանիսի համար: Մեր ունեցած տվյալներով Ժաննա Սահակյանը 25 տարի շարունակ ղեկավարում է Ամասիայի տարածքային արհմիությունը, Մարիա Մաթևոսյանը, Կարինե Մելիքսեթյանը, Սուսամբար Աղաբաբյանը, Ելենա Մարգարյանը երկու տասնամյակ ղեկավարում են համապատասխանաբար Աշտարակի, Թումանյանի, Նոյեմբերյանի, Տաշիրի տարածքային արհմիությունները, Ռոբերտ Չոբանյանը՝ ՀՀ սահմանադրական դատարանի աշխատողների արհմիությունը, Ժենյա Թամրազյանը, Վանիկ Նալբանդյանը 15 տարի ղեկավարն են Դիլիջանի, Գուգարքի տարածքային արհմիությունների, Վարսիկ Ծատուրյանը՝ ՀՀ ոստիկանության ոչ ծառայողների արհեստակցական կազմակերպությունների միության, Նորա Մելքոնյանը՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության աշխատողների արհմիության, Արթուր Խաչատրյանը 10 տարի ղեկավարում է Թալինի տարածքային արհմիությունը:

Գնահատելով ձեր երկարամյա արհմիութենական գործունեությունը՝ ճյուղային հանրապետական միությունը մաղթում է հաջողություն ու վերելք:

Արհմիութենական ակտիվ ու արդյունավետ աշխատանք ենք մաղթում ճյուղային արհմիության անդամ կազմակերպությունների՝ 2017թ. ընտրված նախագահներին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատողների արհմիության նախագահ Լուսինե Մարգարյանին, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատողների նորաստեղծ արհմիության նախագահ Վարդան Մանուկյանին, Հրազդանի տարածքային արհմիության նախագահ Քնարիկ Հունանյանին, Վարդենիսի տարածքային արհմիության նախագահ Սեյրան Գրիգորյանին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏՈՒՄ Է

Աշխարհում 4 միլիարդ մարդ գուրկ է սոցիալական պաշտպանվածությունից, ինչը, ըստ ԱՄԿ գլխավոր տնօրեն Գայ Ռայդերի, լուրջ խոչընդոտ է տնտեսական և սոցիալական զարգացման ճանապարհին: Դեռ շատ ջանքեր են պահանջվում, որպեսզի սոցիալական ապահովության իրավունքը հասանելի լինի բոլորին: Ըստ ԱՄԿ վերջին՝ 29.11.2017թ. զեկույցի՝ աշխարհի բնակչության միայն 45 տոկոսն է իրականում օգտվում առնվազն մեկ սոցիալական երաշխիքից, իսկ մնացած 55 տոկոսը, կամ 4 միլիարդը, գուրկ է նման հնարավորությունից:

Նշվում է, որ աշխարհի բնակչության միայն 29 տոկոսն է օգտվում համալիր սոցիալական ապահովության հնարավորությունից: 2014-2015թթ. այդ ցուցանիշը եղել է 27 տոկոս: Մնացած 71 տոկոսը, կամ 5,2 մրդ մարդ, ընդհանրապես չեն օգտվում կամ մասամբ են օգտվում:

ԱՄԿ զեկույցում նշվում են սոցիալական ապահովության կոնկրետ ասպեկտներ և եզրահանգումներ են տրվում հետևյալ հիմնական չորս ոլորտներում.

Երեխաների սոցիալական պաշտպանություն

□ Սոցիալական պաշտպանությունից օգտվում է աշխարհի երեխաների միայն 35 տոկոսը: Երեխաների գրեթե երկու երրորդը՝ 1,3 մլրդ, սոցիալապես պաշտպանված չեն: Նրանց մեծամասնությունն ապրում է Աֆրիկայում և Ասիայում

□ 0-14 տարեկան երեխաներին տրվող նպաստների ծախսը կազմում է ՀՆԱ-ի 1,1 տոկոսից ոչ ավելին: Դա վկայում է, որ երեխաների կարիքները չեն ֆինանսավորվում

□ վերջին տասնամյակում ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում ավելացել են երեխաներին տրվող դրամական նպաստները: Սակայն, միևնույն է, սոցիալական երաշխիքները դեռևս բավարար մակարդակ չունեն: Որոշ երկրներում նկատելի է անգամ երեխաների սոցիալական պաշտպանվածության մակարդակի իջեցում

Աշխատանքային տարիքի կանանց և տղամարդկանց սոցիալական երաշխիքներ

□ Աշխատանքային տարիքի կանանց և տղամարդկանց սոցիալական պաշտպանվածությունը շարունակում է սահմանափակ մնալ: Նորածին ունեցող մայրերի միայն 41,1 տոկոսն է մայրական նպաստ ստանում, այն դեպքում, երբ 83 միլիոն երիտասարդ մայրեր զուրկ են սոցիալական նման պաշտպանվածությունից

□ Նկատելի է այն փաստը, որ գործազրկության նպաստ ստանում է գործազուրկների միայն 21,8 տոկոսը, մինչդեռ 152 մլն գործազուրկներ զրկված են նպաստից

□ ԱՄԿ վերջին տվյալներով աշխարհում հաշմանդամության նպաստ ստանում է ծանր հաշմանդամություն ունեցող անձանց ընդամենը 27,8 տոկոսը

Տարեց կանանց և տղամարդկանց սոցիալական պաշտպանվածություն

□ Հետազոտության մեջ նշվում է, որ կենսաթոշակի տարիքի անձանց միայն 68 տոկոսն է ծերության թոշակ ստանում

□ Կենսաթոշակային ապահովության և տարեցների այլ նպաստների ծախսը կազմում է ՀՆԱ-ի 6,9 տոկոսը: Նշվում է, որ նպաստների մակարդակը ցածր է և բավարար չէ տարեց մարդկանց աղքատությունից դուրս բերելու համար: Այս միտումը հաճախ խորանում է տնտեսությունում կոշտ խնայողության քաղաքականության հետևանքով

□ Մի շարք պետություններ հրաժարվում են կենսաթոշակային համակարգի սեփականաշնորհումից այն պատճառով, որ այդ քաղաքականությունը ցանկալի արդյունքներ չի բերել: Այնպիսի երկրներ, ինչպիսիք են Արգենտինան, Բոլիվիան, Վենզուելան, Ղազախստանը,

Լեհաստանը, վերադառնում են կենսաթոշակային ապահովման պետական համակարգին

Առողջապահական ծառայությունների համընդհանուր հասանելիություն
□ Ինչպես նշվում է զեկույցում, առողջության ապահովագրության իրավունքը դեռ իրականություն չէ աշխարհի շատ երկրներում: Դա հիմնականում վերաբերում է գյուղական տարածքներին, որտեղ առողջապահության ծառայություններից զրկված է հասարակության 56 տոկոսը (քաղաքային տարածքներում՝ 22 տոկոսը): Որպեսզի առողջապահական ծառայությունները համընդհանուր հասանելիություն ունենան և ապահովեն մարդկանց անվտանգությունը, այդ թվում այնպիսի արտակարգ իրավաիճակներում, ինչպիսին Էբոլայի համաճարակն է, անհրաժեշտ է աշխարհի բուժանձնակազմը համալրել 10 մլն աշխատողներով
□ Երկարաժամկետ բժշկական օգնությունը, որի կարիքն առավելապես տարեցներն ունեն, նախկինի պես անհասանելի է հասարակության 48 տոկոսին, ընդ որում, դրանից տուժում են առավելապես կանայք: Երկրներում, որտեղ բնակչության երկարաժամկետ բուժօգնությունը ամրագրված է օրենսդրությամբ, ապրում է աշխարհի բնակչության ընդամենը 5,6 տոկոսը
□ Նշվածի արդյունքում երկարաժամկետ բուժօգնություն իրականացնում են 57 մլն չվճարվող «կամավոր» աշխատողները: Նրանցից շատերը ընտանիքի անդամներին խնամող կանայք են: Բժշկական ծառայություններում ներդրումների աճը կկրճատի տարեցների շրջանում աղքատության մակարդակը և կնպաստի միլիոնավոր աշխատատեղերի ստեղծմանը՝ լրացնելով որակավորված բուժաշխատողների պակասը, ինչը կազմում է 13,6 մլն մարդ:

* * * * *

Արհմիություններում միավորվելու և կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքը մարդու հիմնարար ազատություններից է, որն ընդունվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից: Մինչդեռ շատ հայտնի ընկերություններ, ինչպիսիք են օրինակ «Samsung»-ը և «McDonald's»-ը, դեռևս չեն ճանաչում արհմիությունների՝ բանակցություններ վարելու իրավունքը:

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) և Եվրոպայի արհմիությունների կոնֆեդերացիան (ԵԱԿ), դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների միջազգային օրը, բարձրաձայնել ու ամոթանք ենք տվել հանրահայտ «Samsung» և «McDonald's» ընկերություններին: Մասնավորապես՝ «Samsung» ընկերությունը իր գործարաններում ու ֆաբրիկաներում որդեգրել է «առանց արհմիությունների» քաղաքականություն և մատակարարներին էլ թույլ չի տալիս արհմիություն ստեղծել: Աշխատողների հաշվին ընկերությունը միլիարդներով շահույթ է ստանում: Այն հայտնի է իր մատակարարների աշխատողների լայնորեն չարաշահումով, մինչև անգամ արհմիությունների վերացմամբ. չնչին աշխատավարձ, առանց երաշխիքների ու ոչ անվտանգ

աշխատանք, հարկադիր արտաժամյա աշխատանք, ոչ ֆորմալ զբաղվածություն և ժամանակակից ստրկություն:

Աշխատողներն այնպիսի լարված իրավիճակում են աշխատում, որ ընկերությունը մի քանի երկրներում իր աշխատողների հանրակացարաններն է վերափոխել, որպեսզի թույլ չտան աշխատողների ինքնասպանություններ: Ժամանակն է, որպեսզի տեխնոլոգիական հսկան վերջ դնի իր կորպորատիվ ազահությանը և աշխատողներին ապահովի արդար աշխատավարձով ու արհմիություններին անդամակցելու իրավունքով:

«McDonald's» - արագ սննդի այս հսկան Մեծ Բրիտանիայում հրաժարվում է աշխատանքային պայմանների շուրջ արհմիությունների հետ բանակցելուց, սակայն բանակցություններ վարվում են Դանիայում, Ֆրանսիայում ու Գերմանիայում:

Քանի որ Եվրահանձնաժողովը, Արժույթի միջազգային հիմնադրամը և այլ ինստիտուտներ առավել հաճախ են անդրադառնում աշխատավարձերի բարձրացման անհրաժեշտությանը տնտեսական աճի կարգավորման և աղքատության հաղթահարման առումներով, ուստի կոլեկտիվ բանակցություններ վարելու իրավունքը կարևոր կենսական նշանակություն ունի ոչ միայն աշխատողների, այլև տնտեսագետների և առհասարակ սոցիալական արդարության համար:

«Ժամանակակից տնտեսությունում չպետք է տեղ ունենան այնպիսի ընկերություններ, որոնք չեն բանակցում արհմիությունների հետ»,- հայտարարել է ԵԱԿ գլխավոր քարտուղար Լուկա Վիսենտինին: «Կոլեկտիվ պայմանագիրը գործատուի և արհմիության միջև աշխատավարձի խելամիտ աճի ապահովման լավագույն միջոցն է, ինչից շահում են և՛ աշխատողները, և՛ ընկերության արդյունավետությունը, և՛ ընդհանուր առմամբ տնտեսությունը»:

««Samsung»-ը և «McDonald's»-ը իրենց համարում են ժամանակակից ընտանեկան բրենդեր, բայց նրանց վերաբերմունքը արհմիության հանդեպ 19-րդ դար է հիշեցնում: Մենք չենք կանգնի, մինչև այս ընկերություններում աշխատողները չունենան արդար պայմաններ»,-նշում է ԱՄԿ գլխավոր քարտուղար Շարան Բարոուն:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

Ուկրաինական texty.org.ua վերլուծական կայքի տվյալներով Հայաստանը Եվրոպայի ամենաաղքատ երկրների տասնյակում է՝ աղքատությամբ զիջելով միայն Ուկրաինային, Մոլդովային ու Ադրբեջանին: Նշված կայքի վերլուծության տվյալներով Հայաստանը, որտեղ միջին աշխատավարձը կազմում է 251 եվրո, չորրորդ տեղում է: Ամենաաղքատ երկիր է ճանաչվել Ուկրաինան, որտեղ միջին ամսական աշխատավարձը կազմում է 190 եվրո: Աղքատության վարկանիշով երկրորդը Մոլդովան է. այստեղ միջին աշխատավարձը 216 եվրո է: Երրորդ տեղում Ադրբեջանն է՝ 232 եվրո միջին ամսական աշխատավարձով: Եվրոպայում ամենաբարձր աշխատավարձերը շվեյցարացիներին է՝ միջինում 4421 եվրո, այնուհետև իսլանդացիներին ու

նորվեգացիները՝ համապատասխանաբար 3440 և 3405 եվրո միջի ամսական աշխատավարձերով:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Իսրայելում 2017թ. դեկտեմբերի 1-ից նվազագույն աշխատավարձը ավելացել է 300 շեկելով, որը հավասարագոր է 100 ԱՄՆ դոլարի: Նվազագույն ամսական գուտ աշխատավարձը 5000-ից (1400 ԱՄՆ դոլար) դարձել է 5300 շեկել: Նվազագույն ժամային աշխատավարձը կազմում է 28,5 շեկել (8 ԱՄՆ դոլար): Իսկ արտաժամյա աշխատանքի 2 ժամի դիմաց իսրայելցիները՝ կատանան նվազագույնը 35,6 շեկել, հաջորդող յուրաքանչյուր ժամվա համար՝ մինչև 42,7 շեկել: 16 տարեկանից ցածր դեռահասների համար նվազագույն աշխատավարձը սահմանված է ժամում 21,4 շեկել (ամսական 3710), 16-23 տարեկանների համար՝ ժամում 23 շեկել (ամսական 3975), 17 տարեկանների համար՝ 25,4 շեկել (ամսական 4399):

Իսրայելի արհմիությունների ֆեդերացիան՝ «Հիստադրուտը», աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների փուլային համաձայնագրի ընդունմանը հասել էր դեռևս 2015թ. մարտին: Այդ ժամանակվանից երեք անգամ ավելացել է նվազագույն աշխատավարձի շեմը: Ներկայում Իսրայելում վարձու աշխատողների գրեթե մեկ քառորդը նվազագույն աշխատավարձ են ստանում:

Հունաստանի արհմիությունները պլանավորել էին դեկտեմբերի 14-ին պետական և մասնավոր հատվածների համազգային գործադուլ:

Քաղաքացիական ծառայողների արհմիությունը հայտարարել է, որ 24-ժամյա գործադուլն ուղղված է թոշակների և աշխատավարձերի կրճատումների դեմ: Հիմնական պահանջներից մեկը աշխատավարձերի բարձրացումն է: Արհմիությունների ներկայացուցիչները սոցիալական արդարության պայքարի շրջանակում գործողությունների համատեղ ծրագիր են մշակել: Նրանք հանդես էին գալու հունական կառավարության՝ հարկերի ավելացման, պետական և մասնավոր հատվածում աշխատողների միջին եկամուտների կրճատման ուղղությամբ իրականացվող քաղաքականության դեմ:

Ուկրաինայի արհմիությունների ֆեդերացիայի նախագահը և անդամ կազմակերպությունների նախագահները հայտարարել են, որ ֆեդերացիան պայքարելու է երկրի սոցիալական բյուջեի համար: Արհմիության միլիոնավոր անդամների անունից ֆեդերացիայի նախագահությունը պետության բյուջեի ձևավորման համար յոթ պահանջ է ներկայացրել կառավարության ու խորհրդարանին.

➤ նվազագույն աշխատավարձի շեմը սահմանել կենսապահովման նվազագույն շեմից՝ 4023 գրիվնայից, ոչ պակաս (ինչը մոտավորապես հավասար է 150 ԱՄՆ դոլարի)

➤ Պետական բյուջեի հաշվին ապահովել բարձրագույն ուսումնական հաստատություններում որոշ կատեգորիաների ֆինանսավորումը և թույլ չտալ աշխատավարձերի և կրթաթոշակների պարտքեր

➤ սահմանել առաջին կարգի աշխատողի տարիֆային աշխատավարձի շեմը, որը պետք է նվազագույն աշխատավարձից ավել լինի

➤ իջեցնել բնական գազի, էլեկտրաէներգիայի գինը, կոմունալ ծառայությունների սակագները՝ ելնելով աշխատավարձ, թոշակ և կրթաթոշակ ստոացողների վճարունակությունից

➤ Ուկրաինայի քաղաքացիներին ապահովել մատճելի և որակյալ բժշկական օգնությամբ, ինչն ամրագրված է երկրի սահմանադրությունում

➤ յուրաքանչյուր տարի ավելացնել ժամանակակից բարձր արտադրողականության աշխատատեղերի քանակը 20 տոկոսից ոչ պակաս չափով:

Ռուսաստանի կառավարությունը հավանություն է տվել «Մնանկության մասին» օրենքում փոփոխություններին վերաբերող օրենքի նախագծին, որով սնանկացած ձեռնարկություններում աշխատողների աշխատավարձերի պարտքերը կմարեն ոչ միայն գործատուները, այլև տարածքային իշխանությունները բյուջեի հաշվին: ՌԴ վարչապետ Դ.Մեդվեդևը ասել է, որ օրինագծով աշխատանքը կորցրած մարդկանց աշխատավարձերի պարտքերը կարող են վճարել նաև պետական մարմինները՝ տարածքային և քաղաքային կառավարման մարմինները: Ռուսաստանի անկախ արհմիությունների ֆեդերացիայի ղեկավար Միխայիլ Շմակովը համոզմունք է հայտնել, որ օրենքում այս նորմի ամրագրումը կմեծացնի աշխատողների՝ չստացած աշխատավարձերը ստանալու հնարավորությունը:

Մանկտ Պետերբուրգի օրենսդիր մարմինը (Ս.-Պետերբուրգի ժողով) հավանության է արժանացրել Արհմիության աշխատողի օր ընդունելու գաղափարը, որն առաջարկվել է Լենինգրադյան արհմիությունների ֆեդերացիայի կողմից: Ֆեդերացիայի նախագահ Վլ.Դերբինը մեկնաբանել է, որ այս խնդրով նրանք բազմիցս են դիմել պատկան մարմիններ, և ուրախ են, որ ի վերջո իրենց ձայնը լսելի եղավ, մանավանդ, որ նման տոներ արդեն կան ՌՖ շատ տարածքներում տարբեր անվանումներով: Նախաձեռնողների կողմից արհմիության օր է առաջարկվել նոյեմբերի 19-ը՝ երբ 1905 թ. այդ օրը Ռուսաստանում ստեղծվեց առաջին արհմիութենական կենտրոնը: